

## ԱՆՀՐԱԺԵՇՏ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՑԱՆԿ

1. սահմանված ձևի ընդունելության քննության մասնակցության դիմում.
2. սահմանված ձևի ինքնակենսագրական տվյալների թերթիկ.
3. անձը հաստատող փաստաթղթի պատճենը (**անհրաժեշտ է ներկայացնել նաև անձը հաստատող փաստաթղթի բնօրինակը, որը ուսումնասիրվելուց անմիջապես հետո վերադարձվելու է դիմորդին**).
4. 3x4 չափի 2 հատ լուսանկար՝ գունավոր.
5. բարձրագույն իրավաբանական կրթություն ստացած լինելը հավաստող ավարտական փաստաթղթի (դիպլոմի, վկայագրի) պատճենը (**անհրաժեշտ է ներկայացնել նաև բարձրագույն իրավաբանական կրթություն ստացած լինելը հավաստող ավարտական փաստաթղթի (դիպլոմի, վկայագրի) բնօրինակը, որը ուսումնասիրվելուց անմիջապես հետո վերադարձվելու են դիմորդին**), **կամ** բուհից տրված տեղեկանքի բնօրինակը ((ընդ որում՝ տեղեկանքի բնօրինակը ներկայացնելու դեպքում դիմորդը պարտավոր է ոչ ուշ, քան ուսումնառության ավարտը Հանձնաժողովին ներկայացնել դիպլոմի պատճենը):  
Եթե դիմորդի բարձրագույն իրավաբանական կրթություն ստանալը հավաստվում է օտարերկրյա պետությունում տրված ավարտական փաստաթղթով, ապա նշված փաստաթղթի հետ դիմորդը Հանձնաժողովին պետք է ներկայացնի նաև ստացած կրթության ճանաչումն ու համարժեքությունը հավաստող իրավասու մարմնի կողմից տրված հայերեն լեզվով փաստաթուղթը).
6. ընդունելության քննության մասնակցության վճարի անդորրագրի պատճենը **կամ** վճարից ազատվելու մասին դիմում.
7. դատվածության վերաբերյալ տեղեկանքը **կամ** նշված տեղեկանքը ստանալու մասին լիազորագիրը:
8. **Հեռավար դիմորդի դեպքում նաև՝** տեղեկանք առ այն, որ հեռավար դիմորդը վերջին մեկ տարին, այդ թվում՝ դիմելու պահին, Երևան քաղաքից 80 (ութսուն) կմ և ավելին հեռավորության վրա է փաստացի բնակվում (եթե հաշվառման հասցեն տարբերվում է փաստացի բնակության վայրի հասցեից).
9. **Հատուկ դիմորդի դեպքում նաև ստորև նշված փաստաթղթերից մեկը՝**
  - առնվազն 10 (տասը) տարվա փաստաբանի, դատախազի, քննիչի, դատավորի աշխատանքային (մասնագիտական) ստաժ ունենալը հավաստող փաստաթղթի պատճենը, կամ
  - իրավաբանական գիտությունների թեկնածուի կամ իրավաբանական գիտությունների դոկտորի գիտական աստիճան ունենալը հավաստող փաստաթղթի պատճենը, ինչպես նաև առնվազն 5 (հինգ) տարվա աշխատանքային (մասնագիտական) ստաժ ունենալը հավաստող փաստաթղթի պատճենը, կամ
  - առնվազն 10 (տասը) տարվա իրավաբանի բարձրագույն մասնագիտական կրթության ոլորտում գիտամանկավարժական գործունեության ստաժը հավաստող փաստաթուղթ (փաստաթղթի պատճենը), եթե հատուկ դիմորդի կարգավիճակի հիմքը համապատասխան աշխատանքային ստաժն է: